«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՄԵՋ ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ԱՌԱՐԿԱՅԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ

Առարկան՝ Կերպարվեստ

Հետազոտող ուսուցիչ՝ Անուշ Ղազարյան

Ուսումնական հաստատություն՝ Երևանի Լ. Շանթի անվան հ. 4 հիմնական դպրոց

Երևան 2023

ՆԱԽԱԲԱՆ

Ոչ ոք չգիտի, թե ինչպիսին կլինի աշխարհը 12 տարի հետո, երբ այսօրվա առաջին դասարանցին կավարտի դպրոցը ու կմտնի կյանք: Բայց ինչպիսին էլ, որ լինի աշխարհը, հասունացման շեմին գտնվող մարդը պետք է կարողանա գործել ինքնուրույն, կայացնել որոշումներ, վերլուծել դրա հետևանքներն ու կրել պատասխանատվություն: ԵՎ նաև շատ կարևոր է, որ ապագա քաղաքացին ունենա ստեղծագործական մտածողություն:

ԱՄՆ-ում ՆԱՍԱ-ն տարիների հետազոտություններ է իրականացրել `կապված մարդու ստեղծագործական զարգացման հետ: Տվյալները շատ հիասթափեցնող են. 5 տարեկան հասակում բոլոր երեխաների 98% -ը ունեն վառ և ուժեղ ստեղծագործական կարողություններ: 10 տարեկանում `արդեն 30%, իսկ 15-ում՝ 12% : Մեծահասակների շրջանում միայն 2% -ն է ստեղծագործորեն մտածում: Հարց է առաջանում ` ո՞ւր գնաց ամեն ինչ: Դուք մոռացե՞լ եք կամ կորել եք: Թե՞ պարզապես մոռացել եք, թե ինչպես է դա ` «չվախենալ ինքներդ ձեզնից և ձեր գաղափարներից»: Կարելի՞ է սա վերականգնել: Փորձը ցույց է տալիս, որ ստեղծագործությունն ամենից շատ ճնշվում է տարբեր կանոններով, նորմերով, ցուցումներով և այլն: Ինչքան մեծ է մարդը, այնքան ավելի դժվար է նրան ստեղծագործության համար դիմանալ կարծրատիպերի, կանոնների, գիտելիքների և այլնի ճնշմանը: Մարդը վախենում է իր հույզերից ու փորձից, որոնք անմիջականորեն կապված են ստեղծագործության հետ: Նա չգիտի, թե ինչպես կառավարել դրանք և օգտագործել իրեն տված էներգիան:

ԵՎ ինչպե՞ս դաստիարակել երեխային դպրոցում, որպեսզի հետագայում ունենալ ինքնուրույն նախաձեռնող և ստեղծագործական ունակություններով օժտված անհատ: Երեխան շատ շահեկան վիճակում է ի տարբերություն հասուն մարդու: Դա այն պատճառով է, որ բացի ծնողից ունի ուսուցիչներ, ովքեր կարող են ոգեշնչել և մոտիվացնել իրենց նախաձեռնության և ստեղծագործելու համար:

ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՄԵՋ ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ԱՌԱՐԿԱՅԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ

«Կերպարվեստը միայն ուսումնական առարկա չէ, այլ զննական ընդունակություն, որի միջոցով երեխաները գիտելիքներ են ստանում և մեկնաբանում շրջակա աշխարհը»

Հովարդ Գարդներ

Այսօր մեր իրականություն է մտել կրթության առանձնահատուկ պայմանների կարիք (ԿԱՊԿ) ունեցող սովորողներրի ինտեգրումը հանրակրթական բոլոր հիմնարկներում: ԵՎ կրթական բարեփոխումները , նոր դասավանդման մեթոդների կիրառումը անպայմանորեն հաշվի է առնում այս հանգամանքը: ՈՒստի բոլոր մտքերն ու մտահոգությունների լուծումները պետք է դիտարկվեն այս կտրվածքով:

Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք (ԿԱՊԿ) ունեցող սովորողները երբեմն լիարժեք ինքնադրսևորվելու հնարավորություն չեն ունենում ինչպես ուսուցիչների, այնպես էլ իրենց հասակակիցների շրջանում: Այս տեսանկյունից առավել արժեքավոր է դառնում առարկան, քանի որ այն ինքնաբացահայտվելու հնարավորություն է տալիս յուրաքանչյուր երեխայի: Որոշ երեխաների համար նկարչությունն իրենց ինքնության մի մասն է, և նրանք ստեղծագործում են՝ անկախ խոչընդոտող դժվարություններից: Միևնույն ժամանակ կան երեխաներ, ովքեր նմանատիպ աշխատանքներում ընդգրկվելու համար կարող են աջակցության կարիք ունենալ: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ներառական կրթության իրականացումը պարտադիր է դարձնում ուսումնական ծրագրի և դասավանդման մեթոդների համապատասխանեցումը ԿԱՊԿ ունեցող երեխաների կրթական կարիքներին՝ «Կերպարվեստ» առարկայի ուսուցիչները ևս պետք է քայլեր ձեռնարկեն

ուսումնական նյութը հարմարեցնելու և դասարանում սովորող բոլոր երեխաների համար հավասար հնարավորություններ ապահովելու համար:

ԿԱՊԿ ունեցող երեխաներն առավել կարիք ունեն իրենց մեջ զարգացնելու ինքնուրույն նախաձեռնելու և ստեղծագործական կարողությունները:

Ի՞նչ է աշակերտի ինքնուրույն նախաձեռնությունը:

Աշակերտի ինքնուրույնությունը կարողությունն է դնել իր առջև խնդիրներ և լուծել դրանք: Սրա հիմքում ընկած է աշակերտի սեփական գիտակցական համոզմունքներով պայմանավորված գործողությունների կատարման ցանկությունը: Այստեղ առաջին պլանում են գտնվում հետաքրքրասիրությունը, բացահայտելու ակտիվությունը, ստեղծագործական ուղղվածությունը, սեփական նախաձեռնությունը, իր առջև նպատակ դնելու կարողությունը:

ԽՄԲԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔ

1

2

Այդ ամենին հասնելու համար պետք է սկսել հենց առաջին դասարանից: Ցածր դասարաններում բնականաբար երեխան չի կարող ընտրել, որ դասը անել, կամ չանել, գրել գրավոր աշխատանք , թե չէ, բայց կարող է ընտրել որ թանգարանը այցելել, որ մուլտֆիլմը դիտել, ջրել դասարանի ծաղիկները, հետևել դասարանի մաքրությանը, սեփական նախաձեռնությամբ և ստեղծագործաբար ձևավորել դասարանի ինտերյերը: Ուսումնառության համընդհանուր դիզայնը (ՈՒՀԴ) դասավանդման հարմարեցումների առանցքային մոտեցումներից մեկն է, որը սովորողներին ուսումնական գործընթացում ակտիվորեն ներգրավվելու, իրենց

մտքերն արտահայտելու, դրանք ներկայացնելու և սովորելու բազմաթիվ հնարավորություններ է ընձեռնում: Ինչպես նշում են հետազոտողները, ՈՒՀԴ-ի սկզբունքներին համապատասխան դասի իրականացումը նպատակ է, որը դեռ մարտահրավեր է և ամբողջությամբ պետք է իրականացվի ժամանակակից դպրոցներում (Pugach and Warger (2001): Այն ենթադրում է, որ ուսուցիչը դասի պլանը կազմելիս պետք է հաշվի առնի դասարանում սովորող բոլոր երեխաների առանձնահատկությունները և այնպիսի մեթոդներ կիրառի, որ բոլորին հասանելի լինի նոր նյութը, բոլորը մասնակցեն և ներգրավված լինեն դասագործընթացում: Այս նպատակին ուղված կերպարվեստի դասաժամին դասարանում հաճախ կարելի է կատարել խմբային աշխատանքներ,(1,2) որովհետև այս ժամանակ հեշտ է համարձակ ու անվախ ստեղծագործել: Այստեղ աշակերտը (նաև ԿԱՊԿ) մենակ չէ, ուսուցչի ուշադրությունը չի կենտրոնացած միայն իր վրա, հետևաբար նա անկաշկանդ է, ազատ և ոչ մենակ:

ԼՐԱՑՈՒՑԻՉ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

Միջին դպրոցում երեխայի մոտ արտահայտվում է անհատական ինքնուրույնությունը: Հատկապես կերպարվեստի դասի ժամանակ, նրանք սկսում են պարզել իրենց դուր եկած ժանրը և ցանկություն հայտնել ավելի խորը ուսումնասիրել այդ ուղղությունը: Դրա համար կարող են գնալ լրացուցիչ արվեստի խմբականեր և դպրոցներ, անցակցել հետազոտական և նախագծային աշխատանքներ: (3,4,5)Իսկ անձնական ընտրությունների ստեղծագործական արդյունքները կարելի է տեսնել ցուցահանդեսների, փառատոների, միջոցառումների, մրցույթների ժամանակ: Սրանց արդյունքում երեխան (նաև ԿԱՊԿ) տեսնում է սեփական ընտրությամբ կատարված ստեղծագործական աշխատանքի արդյունքը, որը նրան կտա վստահություն, համարձակություն, կմոտիվացնի ավելին ստեղծագործելու ցանկություն: Սրան կարող է օգնության հասնել ինքնագնահատումը, ինքնաքննադատությունն ու սեփական ստեղծագործությունների համեմատումը՝ արձանագրելու համար աճը: Սա կօգնի հաջորդ քայլն անել նորովի:

Այսպես աշակերտի մոտ կսկսի զարգանալ ստեղծագործելու կարողությունը: ԵՎ տարիներ հետո արդեն հասուն կյանքում նա ևս կլինի ստեղծագործ: Ստեղծագործող մարդը միշտ էլ լուծում կգտնի ցանկացած իրավիճակում:

3

4

5

Իսկ ի՞նչ է ստեղծագործական կարողությունը:

Ստեղծագործական կարողությունը հիմնովին նոր արտադրանքի ստեղծման է գործընթացն է (ցանկացած իմաստով): Ստեղծագործականությունը կարծրատիպային մտածելակերպի և գործելակերպից հրաժարվելու ունակությունն է:

Ինչու՞ է աշակերտին (նաև ԿԱՊԿ) պետք ստեղծագործականությունը.

- Այն որոշում է հաջողությունը կրթական գործունեության մեջ:
- Այն որոշում է ձևական տրամաբանությունը (այսինքն `պատճառահետեւանքային կապերը):
- Ստեղծագործական կարողությունն օգնում է աշակերտին գտնել յուրօրինակ լուծումներ ցանկացած բարդ խնդրի համար:
- Սա անհատականության զարգացման հզոր գործոն է:
- Եվ ամենակարևորը, անհրաժեշտ է գոյատևել անընդհատ փոփոխվող աշխարհում:

Ազատությունն ու ընտրության հնարավորությունը անձի ստեղծագործականության համատեքստում դիտարկվում են որպես ի վերուստ տրված շնորհ: Սակայն զարգացման առանձնահատկություններ ունեցող սովորողներից շատերը,

օգնականների և աջակցող սարքերի օժանդակությունից օգտվելով հանդերձ դժվարանում են ներառվել ստեղծագործական աշխատանքներում: Այս տեսանկյունից կարևոր է, որ աջակցող անձը սովորողներին վստահություն ներշնչի ազատ և անկախ մտածելու և գործելու համար, քանզի ստեղծագործական գործընթացի արժեքավոր կողմը սովորելն է՝ երբեմն սխալվելով կամ «երջանիկ պատահականությամբ» ճիշտ անելով: «Կերպարվեստի» դասաժամերի համար նախատեսված դասասենյակը հարմար վայր է ազատ գործելու համար, քանի որ ստեղծագործելու բազմաթիվ եղանակներ կան, և կարևոր է, որ այստեղ երեխաները ճնշված չլինեն և չմտածեն սխալվելու կամ չհաջողելու մասին: Ուսուցիչը կարևոր դեր ունի սովորողների՝ անկախ և ազատ զգալու տեսանկյունից: Հմուտ ուսուցիչները կարողանում են վստահություն ներշնչել սովորողներին՝ հիմնվելով նրանց ուժեղ կողմերի վրա: Կերպարվեստի հարմարեցումների ենթատեքստում սովորողի ազատությունն ու անկախությունը միշտ դիտվել է որպես կարևոր գործոն: Լամորի և Նելսոնի հետազոտության համաձայն՝ «Մտավոր զարգացման խնդիրներ ունեցող անձինք ավելի շատ են նկարել այն դեպքերում, երբ նրանց տրվել են տարբերակներ և ընտրության հնարավորություն» (LaMore and Nelson, 1993, էջ 400): Պարզվում է, որ սովորողներն ավելի ազատ են աշխատում թվային կերպարվեստի դեպքում:

ԵՐԵՎԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ

6

7

8

Ստեղծագործական մտածողության մեջ կարևոր է երևակայությունը: Այն պատկերացումների ու մտքերի, կերպարի ձևի մեջ նորի ստեղծման հոգեբանական ընթացքն է: Երևակայությունը ճանաչողական ընթացք է, որի ժամանակ ստեղծվում են նոր կերպարներ, դրանից էլ նոր գործողություններ ու առարկաներ: (6,7,8) Երևակայությունները լինում են ազատ և ոչ ազատ: Ոչ ազատ երևակայությունը երազներն են, որոնք եղածի չեղած տպավորություններն են: Ազատ երևակայությունը մարդու կողմից հորինված նոր կերպարներն են, որոնք առաջանում են հատուկ մտածված: Երեխաները ամենավառ երևակայողներն են: (9,10) Նրանց մոտ

9

10

երևակայությունն այնքան անիրական կարող է լինել, որ դա նմանվում է երազանքի: Հենց երազանքներն են կազմավորում երեխային: Եվ դրա համար երևակայությունը կարևոր պայման է երեխայի զարգացման գործում:

Նկարչության դասաժամը զարմանալի դասաժամ է, որտեղ հանդիպում են չարն ու բարին, սերն ու ատելությունը, ժամանակն ու հավերժությունը: Ինչպես կրթության բոլոր բնագավառներում նկարչության դասաժամին էլ կարևորագույն խնդիր է վեր հանել սովորողի ստեղծագործական կարողությունները: Այդ ընթացքը ծնում է ինքնուրույնություն, ազատ արտահայտման սովորություն, վստահություն սեփական անձի նկատմամբ, որովհետև կրթության հիմնական նպատակը, ոչ միայն որոշակի գիտելիքին տիրապետելն է, այլև զարգացած, ստեղծագործ անձի ձևավորումը: Ստեղծագործելը ինքնուրույնության, նոր և յուրահատուկ բան ստեղծելու կարողության բարձրագույն ձևն է: Ստեղծագործելու կարողությունը անհրաժեշտ է մարդու գործունեության բոլոր ասպարեզներում:

Դպրոցում ուսումնական գործընթացի կազմակերպումը ենթադրում է ուսուցչի և աշակերտի ակտիվ գործունեություն: Ինչքան էլ ուսուցիչը դասը բացատրի , տա առաջադրանք, եթե աշակերտը չաշխատեց, ապա չի կարողանա հասկանալ և յուրացնել թեման: Կերպարվեստի ուսուցումը հնարավոր է ժամանակակից ուսուցման միայն ակտիվ մեթոդներով և ձևերով: Աշակերտը, եթե լինի պասիվ, ապա չի սովորի գրեթե ոչինչ: Իսկ թեման կարող է հասկանալ և ստանալ գիտելիք միայն ինքնուրույն աշխատանքի և գործունեության ընթացքում

ՈՒՍՈՒՑԻՉԸ ՈՐՊԵՍ ԸՆԿԵՐ

20-րդ դարի ամենահայտնի նկարիչներից մեկը՝ Մարկ Ռոտկոն (11,12) աշխատելով երեխաների հետ Նյու- Յորքի Բռունկլինյան հրեական կենտրոնում և լինելով նրանց ամենասիրված ուսուցիչն ու ընկերը գտնում էր, որ ստեղծագործական բնազդներ զարգացնելուց բացի հանճարեղ ուսուցիչները կարող են օգնել աշակերտներին դառնալ ավելի ինքնագիտակից և նրբազգաց, ինքնուրույն և համագործակցող և դա վերջին հաշվով ծնում է լավագույն քաղաքացիներ:Եթե դուք երբևե նայեք Ռոտկոյյի հսկայական նկարներին, որոնք ծածկված են գունային դաշտերով, ապա ձեզ կթվա, որ դրանք նկարել են երեխաները: (13,14) Ինչպես նկատում է Ռոտկոն «Եվ

իրականում բոլորը չեն դառնում կայացած արվեստագետներ: Պետք է կենտրոնանալ այն բանի վրա, որ աշակերտներին բերել գեղարվեստական ինքնաարտահայտման:

Աշակերտների մեծ մասը, մեծանալով, կկորցնեն իրենց երևակայությունը: Բայց որոշներն էլ չեն կորցնի և հույս կա, որ դպրոցում ձեռք բերածը չեն մոռանա և կշարունակեն իրենց մեջ գտնել գեղեցիկը: Իսկ մյուսները իրենց փորձի վրա հիմնված դպրոցում անցած իրենց հաճելի պահերը կվերագտնեն ուրիշների ստեղծագործություններում»:



11



12

13

14

Ռոտկոն 1934թվականին մի էսսե էր հրապարակել, որը նպատակ ուներ վերածելու գրքի, ինչը չհասցրեց անել: Բայց այդ 49 թերթանի նշումները, որոնք հայտնի են, որպես Կնիգա կառակուլի օգտագործվում են կերպարվեստի ժամանակակից մեթոդիկաների մշակման համար: Ներկայացնեմ այդ գրքից հինգ կարևոր դաս:

Դաս 1 Ցույց տվեք աշակերտներին, որ արվեստը ունիվերսալ արտահայտման ձև է և այնքան հասարակ, ինչպես լեզուն և երգեցողությունը:

Դաս 2 Խուսափեք ճնշել աշակերտների ստեղծագործական ունակությունները ակադեմիական նախապատրաստումներով:

Դաս 3 Աշակերտին ծանոթացրեք արվեստի պատմության հետ ժամանակակից արվեստի գործերի միջոցով ոչ թե հին վարպետների միջոցով:

Դաս 4 Կազմակերպեք ցուցահանդեսներ աշակերտների աշխատանքներով, որպեսզի բարձրանա նրանց վստահությունը սեփական ուժերի հանդեպ:

Դաս 5 աշխատեք ստեղծագործական մտածողներ դաստիարակելու վրա, այլ ոչ թե պրոֆեսիոնալ նկարիչներ: Պետք է հիանալ յուրաքանչյուր աշակերտի ստեղծագործությամբ, նրա թարմությամբ, զգացմունքայնությամբ: Պետք է դառնալ աշակերտի ընկերը, (15) թույլ տալ նրան արտահայտվել ու համարձակորեն նկարել իր երևակայությունն ու հուզմունքը: Երբ նա քեզ համարի իր ընկերը կկարողանա համարձակորեն ինքնարտհայտվել, դառնալ սեփական մտքի , երևակայության իրականացման ինքնուրույն նախաձեռնողը: Ներկայացնելով Ռոտկոյի և այլ ժամանակակից նկարիչների նկարները աշակերտը չի խուսափի ներկայացնել իր մտորումները թեմայի շուրջ, կամ

15

նկարչական մոտեցումները այս կամ այն ժանրի մեջ տեղծագործելիս։

ՄԻՋԱՌԱՐԿԱՅԱՆ ԿԱՊ

Կերպարվեստի դասաժամերին երեխայի ինքնուրույնությանն ու ստեղծագործական կարողությունների արտահայտմանն են նպաստում նաև այլ առարկաների հետ կապը, հատկապես թեմատիկ նկարչության ժամերին։ Այդ առարկաներից են երաժշտությունը, պատմությունը, գրականությունը, աշխարհագրությունը և այլն։ Օրինակ՝ գրականությունը լայն հնարավորություն է տալիս նկարազարդել հեքիաթներ, բանաստեղծություններ, առակներ և այլ ստեղծագործություններ։ Միջառարկայական կապի շնորհիվ աշակերտները հարստացնում են իրենց պատկերացումները շրջապատող աշխարհի մասին, որն էլ թույլ կտա ինքնուրույն և ստեղծագործաբար վերլուծել սյուժեն և պատկերացումներն ու երևակայությունը հանձնել թղթին։(16,17,18,19,20)



16



17

18

19

20

Նկարչության դասաժամի կարևոր մեթոդներից է տեսնելու և դիտելու կարողությունը զարգացնելը: ՈՒսուցիչը արդեն ուշադրությունը կենտրոնացրած աշակերտին ցույց է տալիս բնօրինակի համաչափությունները, կառուցվածքը, ձևը: Ըստ տարիքային առանձնահատկությունների կարևոր պայման է նկարչական գիտելիքի հաղորդումը ուսուցչի կողմից: Այդ ժամանակ աշակերտը գիտակցաբար է սկսում մոտենալ աշխատանքի կատարմանը: ՈՒսուցիչը պետք է քայլ առ քայլ ցույց տա նկարելու ընթացքը պարզից բարդ և ցանկություն արթնացնի երեխայի մեջ սկսելու աշխատել: Տեսնելու կարողությունը և դիտողականությունը զարգացնելու մեթոդներից է նաև

հարց ու պատասխանի տեսակը: Այստեղ աշակերտները ակտիվորեն պատասխանում են ուսուցչի հարցերին, դիտելով բնօրինակը և բացահայտելով այն: Այստեղ աշակերտը ինքնուրույն կարողանում է վեր հանել իր համար դժվարություն ներկայացնող հարցերը և համարձակորեն ձեռնամուխ լինել աշխատանքի կատարմանը ինքնուրույն նախաձեռնությամբ: Նկարի ավարտման համար ուսուցիչը հնարավորության դեպքում կարող է առաջարկել ոչ ավանդական ձևեր, (21,22) որով

21

22

կխթանի աշակերտների ստեղծագործական կարողության զարգացմանը: Օրինակ շվեյցարացի նկարիչ Ֆրանց Բրուլհարթը մեթոդ ունի, որի ժամնակ նկարում թ կենցաղային տարբեր իրերի և տարբեր նյութերի միջոցով: Այդ մեթոդով ստացված նկարները լինում են անհարթ բարելիֆով, որոնք շոշափման միջոցով հասանելի են լինում նաև տեսողական խնդիրներ ունեցող աշակերտին:

Բոլոր աշակերտների սիրելի պահը գունավորման ընթացքն է,(23) որը շատ անգամ կրկնելիս կարող է ձանձրացնել: Նորից պետք է ուսուցիչը բացատրի նկարչական գրագիտություն: Եվ դա կբացահայտի գույների նոր հատկություններն ու աշակերտին ձանձրալի չի թվա:

23

ՈԳԵՇՆՉՈՒՄ

Աշակերտի համար ուսուցիչը պետք է ոգեշնչման աղբյուր լինի: Ոգեշնչել կարող է ամենատարբեր տեխնիկաներով արված նկարների գիրքը, որը դասի ժամանակ ցույց կտա ուսուցիչը: Երբ վերջինս չի համեմատի, չի քննադատի, չի խորանաաշակերտի որևէ նկարի մեջ, ապա դիտող աշակերտի մոտ կարթնանա ցանկություն նկարելու: Տարբեր տեխնիկաներով նկարել ուսուցիչը կարող է սովորեցնել էտապներով: Աշակերտի առաջ չի դրվում խնդիր կրկնել նույնը և ստանալ նույն արդյունքը, այլ , երբ գրքի օրինակները փարոս կդառնան աշակերտի աչքերում իսկ էտապային աշխատանքը տեղ կգտնի արդեն նրա գիտակցության մեջ, ապա աստիճանաբար աշակերտը կփոխվի և կստանա ստեղծագործական իմպուլս և կդառնա ավելի համարձակ:

Շատ կարևոր է աշխատանքն անելիս չվախենալ դժվարություններից: Սրանում ևս ուսուցիչը պետք է կարողանա սեփական աշխատանքով մոտիվացնել աշակերտին: Այստեղ ևս գործի է դրվում կախարդանքը: Օրինակ շատ դժվար թվացող բնապատկերը նկարելիս, ուսուցիչն ուշադրությունը հրավիրում է գլխավոր գծի վրա, որը ստանալիս այլևս դժվար չի լինի նկարել մնացածը:

Այսպիսով՝ սովորելը հնարավոր դարձնելու առաջին քայլը ուշադրության կենտրոնացումն է: Երբ աշակերտը կենտրոնացնում է ուշադրությունը, ուսուցանվող նյութը տեղափոխվում է աշխատանքային կամ կարճաժամկետ հիշողության մեջ: Մարդու կարճաժամկետ հիշողության հնարավորությունները սահմանափակ են, այսինքն՝ մարդը չի կարող միանգամից շատ բան սովորել: Ըստ գիտնականների՝ մարդը կարող է միանգամից սովորել լավագույն դեպքում 9-10 նոր բան: Որոշ գիտնականներ ավելի հոռետես են և համարում են, որ մարդը կարող է սովորել 4-5 նոր բան: Նշանակում է պետք չէ մեկ դասաժամի ընթացքում երեխային ծանրաբեռնել

Շատ նոր գիտելիքներով: Այն պետք է մատուցել էտապներով և պարզից բարդ:

ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒՄ

Այսօրվա իրական և վերտուալ աշխարհում պակասել ու կարևոր է դարձել կենդանի շփումը: ՈՒսուցիչն անընդհատ գտնվում է խոսքային շփման մեջ աշակերտի հետ: ԵՎ նրանից, թե նա ինչպես է իրականացնում այդ ֆունկցիան, կախված է նրա գործունեության հաջողվածությունը: Մասնագետները պնդում են, որ եթե բառերի ճշգրտությամբ հաղորդվում է ինֆորմացիայի 7 տոկոսը, ապա ձայնային միջոցներով՝

24

25

38 տոկոսը, իսկ ժեստերի և միմիկայի միջոցով՝ 55 տոկոսը: Այսինքն կարևոր է ոչ միայն թե ինչ ասվեց, այլ՝ ինչպես ասվեց: (26)

26

Դասը ամենակենդանի, բայց կարճատև կյանք ունեցող, շփման միջոցով գիտելիք հաղորդող ժամանակահատվածն է: Ես կարծում եմ, որ յուրաքանչյուր ուսուցիչ դասարանում ինչ որ ժամանակ դառնում է արարիչ: Իսկ կերպարվեստի ուսուցիչն՝ առավել ևս: Երբ կանգնած ես աշակերտների առջև դու, կարծես արտիստ ես բեմում, իսկ նրանք քո հանդիսատեսը: Դու ներկայացնում, պատմում, բացատրում ես դասը և աստիճանաբար աշակերտ-հանդիսատեսին ներգրավում թեմայի մեջ: Ինչքան պարզ, անկեղծ, վստահ, գեղարվեստական է արտիստի ելույթը, այնքան լսելի

է հանդիսատեսի համար, ինչքան լսելի է, այնքան ոգևորիչ-շարունակական է արտիստ-ուսուցչի համար դասը։

Աշակերտն այլևս անհամբեր է ինքը կատարել, փորձել, յուրացնել ներկայացվածը։ Այս ոգևորության և հմայքի ժամանակ էլ ծնվում է սերը։ Երբ սերը կա սիրելի է դասը, առարկան, դպրոցը։ Կերպարվեստի դասաժամի սիրո կերտման ընթացքին իրենց մեծ նշանակությունն ունեն ձեռքերը։ Երբ վերցնում ես կավիճը և մոտենում գրատախտակին, դառնում ես հրաշագործ։ Ձեռքերը գործում են, մտածում, խոսում, ազդում, հմայում, լրացնում և պատկերավոր են դարձնում խոսքը։ (24,25) Քանի որ նրանք մեր մտքի հավատարիմ կատարողներն են, ապա նկարելիս արտահայտում են և՛ պատկերը, և՛զգացմունքները, փոխանցելով ֆիզիկական և հոգևոր էներգիա։ Աշակերտը հետևում է ուսուցչի ձեռքի շարժումներին, փորձում վերարտադրել իր թղթի վրա։ Վերարտադրում է այն շնչով և էներգիայով, ինչ որ տալիս է ուսուցիչը։ Եվ գալիս է մի զգացմունքի պահ՝ բերկրանքի պահը։ Եվ կատարվում է միաձուլման կարևոր, հրաշք ընթացքը։ Հանդիսատեսը, որը, նաև կատարող է ձուլվում է բեմին՝ ուսուցչին։ Այս պահից աշակերտը հարստանում է նոր գիտելիքով, խանդավառվում է, լցվում հաղթանակով։

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Կերպարվեստի դասաժամին սովորողների մեջ ինքնուրույնության նախաձեռնություն և ստեղծագործական ունակությունների զարգացման համար անհրաժեշտ են մշակել և օգտագործել նոր ժամանակակից դասավանդման մեթոդներ, հաշվի առնելով նաև, հատկապես, կրթության առանձնահատուկ պայմանների կարիք (ԿԱՊԿ) ունեցող սովորողների առանձնահատկությունները:

Աշակերտի ինքնուրույնությանը կարողությունը զարգացնելուն կնպաստի դասարանում խմբային աշխատանքները, անձնական ընտրությամբ լրացուցիչ դասընթացներին, խմբակներին, հետազոտական, նախագծային աշախատանքներին, ցուցահանդեսներին, դասարանական և արտադասարանական միջոցառումներին մասնակցությունը:

Աշակերտի ստեղծագործական կարողությունների զարգացման համար անհրաժեշտ է խթանել երեխայի երևակայության զարգացմանը, խթանել ծավալելու ակտիվ գործունեություն ժամանակակից ուսուցման միայն ակտիվ մեթոդներով և ձևերով: Դասարանում և դպրոցում դառնալ աշակերտի ընկերը, ումից չեն վախենա, չեն կաշկանդվի: Շեշտը դնել այն բանի վրա, որ ուսուցիչը աշակերտին ծանոթացնի արվեստի պատմության հետ ժամանակակից արվեստի գործերի միջոցով ոչ թե հին վարպետների միջոցով (չբացառելով դրանք): Չպետք է ակնկալել աշակերտներից ստանալ պրոֆեսիոնալ նկարիչներ:

Նկարչության դասաժամի կարևոր մեթոդներից է տեսնելու և դիտելու կարողությունը զարգացնելը, որպեսզի ունենալ աշակերտի կենտրոնացված ուշադրություն:

ՈՒնենալու համար ստեղծագործական կարողություններով օժտված աշակերտներ պետք օգտագործել նաև ոչ ավանդական ձևեր, տեխնիկաներ: Աշակերտին մոտիվացնել հաղորդակցման տարբեր ձևերով:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Быстрые зарисовки с Анной Эгидой
Автор:Анна Эгида
Из серии: МИФ Арт
Из серии: Начни рисовать (МИФ) 2022

РИСОВАТЬ МОЖНО ВСЕМ! УЧИМСЯ РАБОТАТЬ ЛЮБЫМ МАТЕРИАЛОМ ЗА 7 ПОШАГОВЫХ МАСТЕР-КЛАССОВ

Анна Эгида 2023

Марк Ротко. Чудо живописи. Биография великого художника
Франческо Маттецци
Год издания2020

https://www.prodlenka.org/metodicheskie-razrabotki/146838-razvitie-tvorcheskih-sposobnostej-na-zanjatij

Henrik Igityan National Centre for Aesthetics

Կերպարվեստ 1 աշխատանքային տետրի մեթոդական ուղեցույց

ЯЗЫК ТЕЛОДВИЖЕНИЙ

АланПиз

Барбра Пиз

Год издания 2008